

# ԱԶԳԱՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴՐՈՅՆ ԱՌԹԻԻ (1)



ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ԳՈՒՆԱԿԵԱՆ  
Պատրիարք Նրասադեմի

... Այս սկզբունքը իբրեւ կեդրոնական կէտ անգամ մը բնութեան վրայ սինքն իբրեւ կրօնական կամ եկեղեցական Հասարակութիւն միայն ապրիլ կարեւորանալու հասկնալի վերջ, դժուար չ'ըլլաւ ճշդիլ գործին կազմակերպական մանրամասնութիւնները, ի նկատի ունենալով ազգային ոգիին պահպանութեան եւ բարգաւաճման պահանջը եւ տեղական օրէնքներուն ըստ կարելոյն պատշաճելու հարկը:

Նկեղեցի, դպրոց, ազգ, բարեսիրական կեանք, ազգ. մշակոյթ՝ սեպեական լսարանով, Հրատարակչականով, քաղաքով, եւայլն. աւանք պէտք է ըլլան ազգապահպանութեան միջոց-

1) Կ'արտատպենք գեղեցիկ վերջաբանը ողբացեալ Թորգոմ Պատրիարքի վերջին յօդուածին (Միւն, փետրուար 1939):

ները Սփիւռքի մէջ, ինչպէս Պ. Թէքէեան շատ լաւ ներկայացուցած էր «Արեւի» մէջ իր ուշադրաւ խմբագրականներով: Պահել ինչ որ ունէինք ցարդ, եղածը նորոգելով եւ աւելի գարեցանքով զայն նոր միջոցներով եւ կերպերով. իսկ ինչ որ չ'ունէինք ցարդ, բայց գորս ունենալը անհրաժեշտ է՝ ջանալ ձեռք բերել եւ աւելցնել եղածին վրայ: Ազգ. իշխանութեան ամէն շրջանակ, իր եղած երկրին մէջ, պարտի բնի ամէն բանք մասի համերաշխութեան եւ սիրոյ մթնոլորտ պատրաստելու եւ յետոյ լծուելու համար գործի. եզրապահայութիւնը կրնայ այս մասին օրինակ հանդիսանալ ամբողջ Սփիւռքին. չեն պակսիր իրեն՝ ո՛չ խորհող մարդիկ. ո՛չ ներքական միջոցներ, ո՛չ բարիկամեցողութիւն եւ ո՛չ ուրիշ դիրուքներ:

Ընել այս ամէնը՝ անհրաժեշտ է որպէսզի Հայութիւնը, իբրեւ ինքնուրոյն ժողովուրդ եւ ազգ, չկորսուի օտարութեան մէջ, ու չբաժնորի բնաւ իր բնիկ հայրենիքին գաղափարին, որ իր իսկապէս պէտք է ըլլայ:

Սփիւռքի Հայութիւնը պէտք է վարժեցնել ինքզինքնը պանդուխտ նկատելու ու՛ր որ ալ եւ ի՛նչ պայմաններու մէջ ալ որ ապրի: Զկորսուելու համար առաջին անհրաժեշտ զգացումն է ասիկա: Աստուածաշունչին մէջ սրտագրաւ կէտ ուր կայ այս գզգզումը ներկայացնող: Մովսէս, Նարայէի մեծ առաջնորդը եւ վերանորոգիչը, որչափ կրօնական մտնէմ եւ քաղաքական գործիչ, իր ժողովուրդը դէպի իր մայրենաց կամ Աւետեաց երկիրը առաջնորդած ատեն, առաջին քայլափոխին, երբ իր անդրամիկ զուակիր ունեցաւ, *Գերսամ* (Պանդուխտ) կոչեց զայն. իր միտքն էր հասկցնել ժողովուրդին քէ հայրենիքին յոյսը չքառանցնելու համար իր հոգւոյն մէջ՝ պէտք է գիտնար ու յիշէր միշտ քէ պանդուխտ է ինքը իր գտնուած երկրին մէջ:

Այս պատկերը միգր' ալ պէտք է լսուի: